



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

30 JUL 2010

22

ԲԺԿ. ՎԱՀԱՆ ԱՐՄՐՈՒՆԻ

1901/2

Բ Ժ Շ Կ Ի Զ Ր Ո Յ Ց Ն Ե Ր

№ 2.

Վ Ա Տ Ց Ա Ի

(Պ ա ս կ եր ա զ ա Ր ղ)

Գ Ի Ն Ն Է Ը Կ Ո Պ.

Հրատարակումը պատկանում է հայ ազատագրական

616.9
4.88

Թ Ի Յ Լ Ի Զ

այ չըստ. Հնկ. Ֆ. Тип. Груз. Изд. Т—ва.

Большая Ванская ул.

1901

6 коп.

BIT 2 20 FEB 2013

Handwritten text at the top of the page, including a date: 20/12, 1901.

616.9
2-88
այ.

ԲԺԿ. ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

Handwritten signature or name.

Բ Ժ Կ Ի Զ Ր Ո Յ Ց Ն Ե Ր

№ 2.

Վ Ա Տ Ց Ա Ի

(Պ ա ս կ ե Ր ա գ ա Ր դ)

Հրատարակիչն Պետերբուրգի հայ ուսանողութեան

1556

Թ Ի Յ Լ Ի Զ

Տպար. Վրաց Հրատ. Ընկ. § Тип. Груз. Изд. Т—ва.

Большая Ванская ул.

1901

6698

Дозволено цензурою. Тифлисъ, 6 апрѣля 1901 г.



4734

41





Ո՞վ չի լսել վաս ցաւի կամ սի-
ճիլիսի անունը: Ո՞վ չը գիտէ, թէ ի՞նչ
ահագիւն վնասներ է հասցնում նա մար-
դուս, ի՛նչպէս անբախտացնում է նա թէ՛
հիւանդին եւ թէ՛ նրա ընտանիքը:

Շատ բանուոր ձեռքեր աշխատանքից
կտրել է վաս ցաւը, շատերին գերեզման է
տարել ու շատ ընտանիքներ փառացած թողել:

Ցանկալի է, որ մարդիկ չեն հասկա-
նում, թէ ինչից է առաջ գալիս այս հի-
ւանդութիւնը եւ ինչպէս պիտի պահպանեն
իրանց, որ չհիւանդանան:

Այս գիրքը գրված է հէնց նրա համար,
որ մարդիկ ծանօթանան այս սարսափելի
հիւանդութեան հետ, որպէս զի զգուշանան
նրանից ու չփչացնեն իրանց կեանքը:

Ներկայ գրքոյկս կազմելիս առատօրէն
օգտվել եմք բժշ. Սպերանսկու գրքոյկից
«О дурной болѣзни», որը Մոսկվայի Պրո-
գովեան բժշկական ընկերութեան կողմից
նանաչված է իբրեւ ամենալաւը ժողո-
վրդական ընթերցանութեան համար:

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher due to the bleed-through effect.

Ա

Ի՞նչ ԲԱՆ է ՎԱՏ ՑԱԻԸ ԿԱՄ ՍԻՖԻԼԻՍԸ

Շատերը կարծում են, թէ վաս ցարը (ռամկօրէն փիս ցարը) կարելի է ստանալ միմիայն վատ բարք ու վարքի տէր կանանցից, այդ պատճառով էլ մարդիկ ամաչում են խոստովանել, որ հիւանդ են, ամաչում են բժշկի մօտ դնալ բժշկվելու և թաղցնում են իրանց ցարը:

Ուրիշ պատճառներ էլ կան, որ սիֆիլիստը (սիֆիլիս ունեցողը) չի բժշկվում:

Լինում են այնպիսի անզգոյշ ու անուշադիր մարդիկ, որոնք իսկի չեն էլ հասկանում թէ հիւանդ են: Շատերը, թէև նկատում էլ են, որ խոցեր, պզուկներ ունեն, բայց ուշ չեն դարձնում, որովհետև այդ «պտտիկ բաները» չեն նեղացնում նրանց ու չեն արգելում իրանց գործը շարունակելու, որովհետև նրանք յոյս ունեն, թէ «ինքն իրան կանցնի»:

Բայց ժամանակ է անց կենում, հիւ-
 ւանդութիւնը հնանում է, հաստատվում է
 վրան, ու այն ժամանակ դէմքի, մարմնի վրա
 սկսում են երևալ զանազան խոցեր ու դուրս
 տվածներ, առաջ են դալիս յօդացաւեր, ոս-
 կրացաւեր, որոնք հանդիստ չեն տալիս խեղ-
 ճին, ու սա սկսում է նիհարել և ուժերը
 կորցնել:

Այն ժամանակ միայն հիւանդը ուշքի է
 գալիս: Նա տեսնում է, որ յիրաւի հիւանդ
 է, առաջվայ նման չի կարող բանել և որ
 հարկաւոր է բժշկվել, որովհետև, եթէ այդ-
 պէս դնայ, նա պիտի աշխատանքը կորցնի
 ու գերդաստանը քաղցած թողնի:

Բայց վատ ցաւը մենակ հիւանդին չի
 փնասում,—մօտի մարդիկն էլ կարող են վա-
 րակվել, այսինքն. կպչել ու հիւանդանալ:

Բ

Ի՞նչ ԶՊԷՍ ԵՆ ՄԱՐԴԻԿ ՎԱՏ ՑԱԻ ՍՍԱ-
 ՆՈՒՄ

Ժողովուրդը առհասարակ կարծում է,
 թէ սիֆիլիսով հիւանդանում են միայն ան-
 առակները: Այսպիսի հիւանդներին բոլորը
 անբարոյական են համարում: Այդ է պատ-

ճառը, որ սիֆիլիսը ամօթալի ցաւ է համարվում և հիւանդացողն ամաչում է մէկին իր ցաւը յայտնի: Նոյն իսկ բժշկին չի հաւատում իր գաղտնիքը, որովհետև վախում է, չլինի թէ նա գնայ ուրիշներին պատմի ու խայտառակի իրան:

таинка, секретъ

Սրանից մեծ վնաս է հասնում թէ իրան հիւանդին, թէ նրա հետ ապրողին և թէ նրա հետ որ և է յարակցութիւն ունեցողին:

сидят

Հիւանդին հասած վնասն այն է, որ նա ծածկում է իր ցաւը ու չի բժշկվում, իսկ չբժշկված սիֆիլիսը սարսափելի հետևանքներ ունի, ինչպէս կտեսնենք յետոյ: Հիւանդի մօտի մարդիկն էլ վնասվում են նրանով, որ վարակվում են:

заразятся

Բայց որչափ սխալվում է, ով կարծում է, թէ վատ ցաւ միայն անառակ կանանցից կարելի է ստանալ: Բաս ինչպէս է, որ պսակված համեստ կնանիքն էլ, ծերունիներն էլ, երեխաներն էլ, նոյնիսկ ծծկեր երեխաները հիւանդանում են այդ ցաւով:

скрозь

Մի յայտնի բժիշկ գտել է, որ 100 սիֆիլիսոտից 70-ը, նոյն իսկ 80-ը անմեղ ճանապարհով են վարակվել, այսինքն—առանց սեռական յարաբերութիւն ունենալու:

не только половым

Տեսնենք, թէ ինչպէս է լինում այդ վարակումն:

Մարդ այդ հիւանդութիւնն ստանում է այն ժամանակ միայն, երբ հիւանդի խոցերի կամ ջրջուղների բարախն ընկնում է մաշկի (կաշու) կամ բաղանթի վրա*), եւ եթէ սրանց վրա որ եւ է փերծվածք, նեղվածք կամ վերք կայ: Իսկ այսպիսի մանր քերծվածքներ ու պատռվածքներ միշտ կան մեր շրթունքների վրա, բերանի մէջ և սեռական գործարանների վրա:


Սիֆիլիսի խոցերից թարախն ընկնում է այս վերքերի վրա, ծծվում է և տարածվում մեր ամբողջ մարմնի մէջ ու հիւանդացնում մեզ, որովհետեւ այս թարախի մէջ, ինչպէս ասեւ ենք, վատ ցաւի թոյն կայ:


Վարակումն լինում է երկու տեսակ. կամ ուղղակի հիւանդից, կամ մի որ եւ է առարկայի միջոցով, որը հիւանդը գործածելիս է եղել և որի վրա իր խոցերի թարախից քսել:

Ամենից հեշտ կերպով մարդիկ ստանում

*) Թաղանթ կոչվում է ներքնամաշկը, օր. թըրթունքների, լեզուի, բերանի, բզրի, ստամոքսի, աղիքների և այլն:

















են այս ցաւից, երբ որ հիւանդ կնկայ հետ
դործ են ունենում, կնանիքն էլ—երբ հիւանդ
տղամարդու հետ յարաբերութիւն ունե-
նում:

Բայց մենք ասացինք, որ ուրիշ շատ
ձևերով էլ են վարակվում մարդիկ:

Եթէ հիւանդը խոց ունի շրթունքների
վրա, կամ ջրջրուկ, կամ մի որ և է թարախո-
տած ցան (դուրս տված), նա կարող է ու-
րիշին իր ցաւը տալ համբոյքի միջոցով, ո-
րովհետև համբուրելիս հիւանդը իր խո-
ցերը քսում է առողջի շրթունքներին
(պռօշներին) և նրա վրա թողնում վարա-
կիչ թոյնը: Ամենքը գիտեն, թէ ինչ հեշ-
տութիւնով համբուրվում են մարդիկ, մա-
նաւանդ եթէ մի քիչ արբած են, որովհե-
տև արբածները յաճախ «խապրանում են»
իրար հետ:

Ամեն մարդու, որը ձեր տունն է մշտ-
նում, դուք թոյլ էք տալիս գրկել, համբու-
րել ձեր երեխային: Ի՞նչ սարսափելի բան
կլինի, եթէ նրանցից մէկի բերանի մէջ
խոցեր կան և նրա թուրը թունաւորված է:
Չէ՞ որ նա կվարակի ձեր փոքրիկին. իսկ երբ
սա հիւանդանայ, միւս երեխաներն էլ, ձեր
կինն էլ, դուք ինքներդ էլ կվարակվէք:

գրոս րեւ

Հիւանդ ծնողների երեխան դեռ մօր փորումն է վարակվում ու հիւանդ ծնվում:

Սիֆիլիսոտ պառաւ կանայք կարող են վարակել, երբ որ լեզուով ուրիշի աչքից աւազ կամ չոփ են հանում, կամ երբ որ թուր են քսում ուրիշի աչքին, իբր թէ բժըշկելու համար:

Յաճախ գիւղերում ծծամայրները ծծում են ծննդկանի պտուկները: Եթէ բերանում խոցեր ունեն, կարող են այդպիսով խեղճ ծննդկանին վարակել: Այդ դէպքում առաջին խոցը դուրս կգայ ծծի պտուկի վրա:

Վարակվելը, ինչպէս ասել ենք, լինում է նոյնպէս մի որ և է բանի միջոցով:

Հիւանդի վրայի թոյնը քսված—ընկած է լինում այդ առարկայի վրա (օր. հադուստի, բաժակի, դդալի, սրբիչի) ու, երբ որ մի ուրիշը գործ է անում այդ իբր, թոյնը քսվում է նրան ու կարող է վարակել (օր. երբոր հիւանդի բաժակով ջուր են խմում, կամ նրա հագուստը հագնում, նրա երեսսրբիչն ու գողնոցը գործ անում և այլն): Շատ ճաշարաններում բանուորները միևնոյն ամանից, երբեմն էլ հէնց միևնոյն դդալով են ուտում փոխէփոխ, միևնոյն բաժակով թէյ, գինի, արաղ խմում: Եթէ այդ

բանուորներինց մէկը վարակված լինի, կարող է միւսներին էլ վնասել:

Կարելի է հիւանդանալ նոյնպէս և ղայլանի, մուշտուկի, ծխախոտի միջով, երբ որ փոխէփոխ են ծխում:

Մի արհեստանոցի մէջ մի հիւանդ կին միւս բանուոր աղջիկների հետ միասին էր հաց ուտում.—մի քանի օրվայ մէջ նրանից վարակվեցին երեք 14—15 տ. աղջիկներ:

Մի ուրիշ աղջիկ տօներին իր ընկերուհու սպիտակեղէնները հագել էր ու վարակվել:

Այսպիսի դէպքեր շատ են պատահում: Արհեստանոցներում բանուորները ուրիշ տեսակ էլ են վատ ցաւ ստանում:

Օրինակ, դուրգարները (հիւսները) բանելիս մեխեր են դնում բերանները և անպէտքները կամ չբանացրածները դարձեալ ետ դցում մեխերի արկղիկի մէջ: Նրանից յետոյ մի ուրիշ բանուոր այդ մեխերը իր բերանն է առնում, և եթէ առաջին բանուորը հիւանդ է եղած, ինքն էլ է վարակվում: Դերձակները, կար անող կանայք նոյնպէս վերցնում են—բերաններում պահում զանազան կոճակներ, չանգալ-օղակներ, քորոցներ և

Macropod

այլն ու դարձեալ վայր դցում արկղիկի մէջ.
այսպիսով քիչ մարդ չի վարակվում:

Նոյն են անում կօշկակարները իրանց
փայտէ մեխերը բանացնելիս:

Եղել են դէպքեր, որ մի ուրիշի գող-
նոցով աչքերը սրբել են ու վարակվել, այս
դէպքում առաջին խոցը աչքի կողերի վրա
է դուրս գալիս:

Բաղնիսներում լողացողներից շատերը
իրանց հետ սրբիչ չեն տանում, այլ բաղնիս-
պանից են վերցնում. էլ չեն մտածում, թէ
կարող է կեղտոտ լինել:

Անհնար է մի առ մի յիշել այն բոլոր
դէպքերը, երբ մարդ կարող է վարակվել:

Դուք ծառայ էք վարձում և չէք հարց-
նում առողջ է նա թէ ոչ: Հիմի երևակայե-
ցէք, որ ձեր խոհարարը հիւանդ է. չէ՞ որ
նա ամանների, կերակրի հետ միշտ կարող
է վարակել ձեզ, ձեր ընտանիքը:

Մանաւանդ վտանգաւոր են դայեակ-
ները, ծծմայրները.— նրանք իսկոյն կվարա-
կեն ձեր երեխային և ամբողջ ընտանիքը:

Ո՛րչափ զգոյշ պիտի լինի մարդ:

Բաղնիսում նստում էք մի նստարանի
վրա, որի վրա ձեզնից առաջ մի հիւանդ
մարդ է նստած եղել, և դուք էլ հիւան-

դանում էք: Նոյնը կարող է պատահել և արտաքննողներում,

Ձեր լուսցարարը հիւանդ է ու ձեր շապիկի, կամ երեսորբիչի վրա թոյն է քըսվել.—վարակումն պատրաստ է!

Դուք գնում էք—տուն բերում ձեր երեխայի համար մի որ և է խաղալիք, որը մի հիւանդ երեխայ մի քիչ առաջ բերանն է տարած եղել,—ձեր երեխան կարող է նրանով վարակվել, որովհետև այդ խաղալիքի վրա կարող էր թոյն մնացած լինել:

Շատ կանայք հիւանդանում են, երբ որ ծիծ են տալիս վատ ցաւ ունեցող մի երեխայի: Այդ դէպքում առաջին խոցը դուրս է գալիս ծծի պտուկի վրա:

Ընդհակառակն էլ է շատ պատահում, այսինքն ծծմայրն է հիւանդ լինում: այն ժամանակ երեխան է վարակվում: Մայրը տնից դուրս գնալիս իր երեխային յանձնում է հարևան կնոջ. սա էլ երեխայի ձայնը կտրելու համար ճխտում է նրա բերանը իր ծիծը, կամ իր բերնի ծամածը: Եթէ այդ կինը հիւանդ է, երեխան կվարակվի: Իսկ սա վարակվելով, կհիւանդացնի իր մօրը, միւս երեխաներին, յետոյ մօրից կվարակվի հայրը և այլն:

Գ

ԻՆՉՊԷՍ Է ՍԻՖԻԼԻՍԸ ԳԻՒՂԵՐԸ ՄՏՆՈՒՄ

Գիւղացի տղամարդիկ քաղաքներում ստանում են այս ցաւը և վերադառնալով գիւղը, ամենից առաջ, ի հարկէ, իրանց կնոջն ու երեխաներին են վարակում, յետոյ իրանց ծանօթներին ու ազգականներին, և այսպիսով ցաւը տարածվում է գիւղի մէջ:

Ես ճանաչում եմ մի քանի բանուորներ, որոնք Բագուում ստացել են սիֆիլիս ու բերել են մտքրել իրանց տուն:

Հիւանդութիւնը գիւղն են բերում նոյնպէս և զինուորները, երբեմն էլ գիւղացի կանայք, որոնք գնացել էին քաղաք ծծմայրութիւն անելու, կամ տներում ծառայելու, և այնտեղ հիւանդացել:

Բաւական է, որ մի անարատ գիւղում մի երկու սիֆիլիսոտ մտնեն,—կարճ ժամանակում գիւղի մի մասը կամ հէնց ամբողջ գիւղը կարող է վարակվել, որովհետև գիւղացիք բոլորը միմեանց ազգական ու բարեկամ են, շատ մօտ են իրար, միշտ աման-չաման են տալիս-առնում, մի ամանից ու-

տուում, միասին քէֆեր անուում, համբուր-
վում և այլն: Այն էլ ասենք, որ գիւղացիք
չեն ճանաչում այդ հիւանդութիւնը և ու-
րեմն իսկի չեն էլ զգուշանում նրանից:



Ի՞նչ են ՎԱՏ ՅԱԻԻ ՆՇԱՆՆԵՐԸ

Վարակվելուց (այսինքն թոյնը մի տեղ
գիպչելուց) մի քանի օր անցած այն տե-
ղում, որտեղ թոյնը ընկել է, դուրս է գա-
լիս օսպի մեծութեամբ խոցիկ: Այդ խոցը
երբեմն աւելի մեծ է լինում, երբեմն էլ
ընդհակառակը այնքան փոքր, որ հիւանդն
իսկի չի էլ նկատում: Խոցը չի ցաւում, մա-
քուր պահելուց և բժշկի գեղերով նա շու-
տով անցնում է, իսկ եթէ կեղտոտ է պահ-
ված, կարող է շատ մեծանալ, տարածվել
ու այն ժամանակ աւելի դժուար կլինի նրան
բժշկելը:

Սա սկզբնական կամ առաջին խո-
ցիկն է (e a n k r):

Սա կարող է գոյանալ մարդուս մարմնի
որ տեղն ասես: Սեռական յարաբերութեան
միջոցին նա դուրս կգայ սեռական մասերի
վրա: Եթէ վարակումն համբոյրի կամ որ

և է ամանի միջով է եղել, խոցը դուրս կգայ պռօշների, լեզուի վրա կամ բզի մէջ (որկորի վրա)։ Վերև ասացինք, որ նա կարող է երևալ աչքի կողերի, կնոջ ծծերի, վերքերի վրա. մի խօսքով—ամեն տեղ։

Այս խոցի քարախը խիստ վարակիչ գորուքիւն ունի։ Ուրեմն այս խոցը ունեցողը իրաւունք չունի իր կնոջը (և առհասարակ ոչ ոքի) մօտենալ։

Խլերը։ Խոցի երևալուց մի քանի օր անց, խոցից վեր, կաշու տակ սկսվում են շօշափվել մանր կարծր գնդակներ, որոնք սակայն չեն ցաւում։ Սրանք սիֆիլիսական խլերն են։ Եթէ շանկրը սեռական մասերի վրա է, այդ խլերը աճուկներումն են երեւում; եթէ շրթունքների վրա է կամ բզի մէջ, ուռչում են ծնօտի տակի խլերը և այլն։

Այս խլերի երեւալը նշան է, որ թոյնը արդէն մտել է արեան մէջ։

Բայց հիւանդութիւնը դրանով չէ վերջանում։


Վարակման օրից անցնում են 5—6 շաբաթ (երբեմն էլ աւելի), խոցը լաւանում է—վերջանում, և յանկարծ դուրս են ընկնում հիւանդութեան նոր երևոյթներ (նը-


1556

4734
41














շաններ): Այսպէս, մարմնի վրա երեւում են զանազան ցաներ (դուրս տվածներ), որոնք կամ պզուկների նման են լինում, կամ հասարակ վարդագոյն բծերի: Յետոյ ցաւեր են գալիս բերանի մէջ, բզի մէջ, սեռական գործարանների վրա, ետքում,—սրանք արտադրում են թարախային հեղուկ, որը սկզբնական խոցի թարախի նման զօրեղ վարակիչ ոյժ ունի:

Այս ժամանակ խոցերը ու ցաւեր դուրս են տալիս նոյնպէս և կոկորդի մէջ, ու ձայնը խուպոտում է, նոյն իսկ կարվում: Յետոյ մաղերը թափվում են, թափվում են նոյնպէս և յօնքերը, արտեւանունքը (թարթափները), երբեմն էլ աչքերն են ցաւում:

Այս միջոցին վարակիչ թոյնը գտնւում է համ հիւանդի թքի, համ նրա արեան մէջ և հիւանդը շատ զգոյշ պիտի լինի, որ ուրիշներին չհիւանդացնի: Եթէ հիւանդը իսկոյն բժշկի դիմի ու սկսի բժշկվել, նա կարող է բուրորովին առողջանալ: Առհասարակ հէնց որ մի բան երեւաց վրան (խոց, պզուկներ և այլն), նա իսկոյն պիտի բժշկին դիմի:

Զպէտք է մոռանալ, որ այսպիսի բա-

ներ ամեն բողոք կարող են երեւալ: Եւ յի-
րաւի, հիւանդութիւնը միանգամից չի վեր-
ջանում, այլ մի քանի ժամանակ թագնվում
է (2—3 ամիս) և նորից երեւում: Ուրեմն
հիւանդը միշտ պէտք է զգոյշ մնայ ու իր
վրա հսկի, եւ չասի թէ. «էհ, պղուկ է, էլի,
կանց կենայ»: Եթէ ականջ չդնի ու չը
բժշկվի, այն ժամանակ հիւանդութիւնը
քանի դնայ, կարմատանայ:

Այն ժամանակ մարմնի զանազան տե-
ղերում կերեւան կարմրաւուն պղուկներ, ու-
րոնք կթարախակաւեն, կծակվեն ու կգառ-
նան խոցեր: Յետոյ ոսկորները կուռչեն—
կփտեն, կխոցոտվեն ու կտոր-կտոր դուրս
կգան կաշու տակից: Միեւնոյն ժամանակ,
ցաւը կընկնի բիթը, կսկսվի սաստիկ գար-
շահոտ հարբուխ, քթի մէջ վերքեր կգոյա-
նան, այնտեղից արնախառն թարախ կհոսի,
ու դրա հետ դուրս կգան փտած ոսկորնե-
րի կտորներ: Վերջապէս քիթը կըլի, բիմբը
կծակվի, և հիւանդը այլեւս անկարող կլինի
պարզ խօսել ու կանոնաւոր կերպով սնունդ
առնել: Նրա ձայնը քթային (նա քթի մէջ
կխօսի) ու խռխռան կղառնայ, իսկ կերա-
կուրը կուլ տալիս քթից դուրս կգայ: Եր-
բեմն էլ բանն այնտեղ է հասնում, որ հիւան-

դը հազիւ կարողանում է փափսալով խօսել: Ուերի, թեերի, գլխի ոսկրները սարսափելի կերպով ցաւում են ու հանգիստ չեն տալիս խեղճին մանաւանդ գիշերները անկողնու մէջ:

Պատահում է, որ հիւանդը դժուարու թիւնով է ձեռներն ու ոտները շարժում, որովհետև յօդերը (խաղերը) հիւանդանում են, նրանց վրա խոցեր են դուրս գալիս: Երբեմն էլ այնպէս է լինում, որ մի ձեռը, մի ոտը կամ թէ չէ հէնց երկու ոտերն էլ միասին թուլանում են ու հիւանդը անդամալոյժ է դառնում: Այն ժամանակ հիւանդի դուրսթիւնը սարսափելի է դառնում: Այն մարդը, որը պիտի աշխատէր, իրան ու իր ընտանիքը կերակրէր, այդ մարդը վայր է ընկել անդամալոյժ դառած, չի կարող ոչ ոտը շարժել, ոչ ձեռը, մի խօսքով—ծանր բեռ է դարձել ուրիշների համար:

Լինում են և այնպիսի դէպքեր, որ վատ ցաւ ունեցող հիւանդը կուրանում է, խլանում, խելագար դառնում, նրա ներսը զանազան խուլեր, ուռուցքներ, խոցեր գոյանում և ուրիշ շատ տեսակ հիւանդութիւններ առաջ գալիս: Հիւանդը նիհա-

րում է, չորանում և վերջապէս սարսափելի տանջանքների մէջ մեռնում:

Ե

ԻՆՉՊԷՍ ՄԱՐԴ ՊԻՏԻ ՊԱՀՊԱՆԻ ԻՐԱՆ ՎԱՏ ՅԱԻԻՑ

Սիֆիլիսը այնքան տարածված ախտ է, որ անզգոյշ մարդը ամեն օր կարող է վարակվել:

Մենք տեսանք, որ սիֆիլիսի գլխաւոր աղբիւրը վատ բարքի տէր կանայքն են, որովհետև սրանք համարեա բոլորը հիւանդ են լինում այդ ցաւով: Մեր բանուորներն ու վաճառականները, որոնք ուրիշ երկիրներ են գնում, պիտի շատ զգոյշ լինեն, զսպեն իրանց ու յարաբերութիւն չունենան կասկածելի կանանց հետ:

Շատերը չափազանց թեթև են նայում այս հիւանդութեան վրա, բայց մենք ցոյց տուեցինք, թէ որքան սարսափելի են նրա քսասները. ուրեմն ամեն մէկը, որը սիրում է իր կեանքը ու իր ապագայ երջանկութիւնը, պէտք է ժուժկալ մնայ:

Աւելորդ եմ համարում խօսել ամուսնացածների մասին. — նրանք պիտի սարսափ

փեն այդ ցաւից, եթէ խղճում են իրանց ընտանիքը:

Բայց ում անբաղդութիւնն չի պատահում: ամեն մարդ կարող է հիւանդանալ և, եթէ ընտանիքում մէկին այդ ցաւը կը պել է, չպէտք է նրան հայհոյել ու երեսովը տալ, այլ պէտք է օգնել, որ բժշկվի:

Հիւանդը պիտի շատ զգոյշ լինի, որ ոչ ոքի չվարակի: Նա ոչ ոքի չպիտի համբուրի, իր թարախտած շորերը, իր թաշկինակը, շապիկը, երեսորբիւր, մանաւանդ խոցերի կապերը առանձին պիտի պահի ու ջոկ լուանայ: Նա դէս ու դէն չպէտք է թքի և ոչ իր բերանի բանը (օր. ծխախոտ, զայլանը, կծած թիքան, կծած միրգը) ուրիշին տայ: Բերանի ծխախոտը չպէտք է ոչ էլ գետին գցի, որովհետև երեխաները կարող են բերաններն առնել ու վարակվել: Աւելորդ է ասել, որ մինչև լաւ առողջանալը, նա իրաւունք չունի իր կնոջը մօտենալ. — նրա անկողինը պիտի առանձին լինի:

Քանի որ սիֆիլիսը օդի միջով չի անցնում, ուրեմն հիւանդը կարող է ուրիշներին հետ ապրել, բայց իր սպիտակեղէնը, իր աման-չամանը, իր բաժակը, չանդալ-դանակը պիտի առանձին պահի ու ամեն ան-

դամ գործ ածելուց յետոյ եռման ջրով լուանայ:

Մի խօսքով, հասկացող ու խղճով հիւանդը ինքը պիտի զգոյշ լինի, որ ուրիշների մեղքի տակը չընկնի: Մեծ մեղք են անում այն հիւանդները, որոնք հասկանում են, որ կարող են ուրիշներին վարակել և այնուամենայնիւ թագցնում են իրանց ցաւը, էլի ամենքի հետ նստում—կանդնում են, ուտում—խմում են ու ուրիշներին էլ հիւանդացնում:

Շատերն էլ ամօթից թագցնում են իրանց հիւանդութիւնը և չեն հասկանում, որ հիւանդանալն ամօթ չէ,—անբաղդութիւն ամեն մարդու կարող է պատահել: Ամօթ ու մեղք այն ժամանակ կլինի, երբ որ նրա անզգուշութիւնից ուրիշները վարակվեն:

Այսպէս պէտք է վարվի բարեխիղճ հիւանդը, բայց հիւանդի վրա յոյս դնել չի կարելի: Ամեն հիւանդ հօ այնքան բարեխիղճ չի լինի, որ ուրիշի մասին հողս տանի, վերջապէս նա կարող է իսկի չիմանալ էլ, թէ վարակված է:

Ուրեմն ամեն մարդ պիտի ինքը զգոյշ ապրի: Շատ վատ սովորութիւններ կան մեր

մէջ: Օրինակ. բանուորները մի ամանի միջից են ուտում-խմում, միևնոյն գդալը փոխէփոխ բանեցնում, կամ իրար ձեռքից ծխախոտ ու զայլան վերցնում, կամ միևնոյն բաժակով խմում և այլն: Այդպիսով, եթէ մէկը հիւանդ է, միւսներն էլ կարող են բռնվել այդ հիւանդութիւնով: Ամեն բանուոր անպատճառ պիտի իր ամանը, իր գդալն ու բաժակն ունենայ: Սրանց արժէքը մի քանի կոպէկ է, ամեն մարդ կարող է գնել:

Աշխատելիս էլ մարդ պիտի զգոյշ լինի, ուրիշի բերնում եղած մեխերը, թելը իր բերանը չտանի և այլն: Առհասարակ բերան չգնի այնպիսի բաներ, որոնց վրա կարող է ուրիշի թուք կամ թարախ ընկած լինել:

Սիֆիլիսոտի իրերը (գործածելի բաները), եթէ լաւ լուացված են, անփնաս են դառնում: Հետեւաբար մաքրութիւնը անհրաժեշտ է: Դժուար բան չէ մի աման լուալը, եթէ ամանը քոնը չէ, օր. ճաշարանում:



ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

Առհասարակ մարդիկ բժշկի են դիմում այն ժամանակ միայն, երբ ցաւեր ունեն կամ երբ մի մեծ խոց և ուռուցք է դուրս գալիս նրանց մարմնի վրա:

Բայց այդպէս չպէտք է անել, թէ չէ հիւանդութիւնը կհնանայ:

Ընդհակառակը, հէնց որ մի կասկածելի բան տեսնէք ձեզ վրա, խսկոյն բժշկի գնացէք: Փառք Աստծու, այժմ ամեն տեղ բժիշկ կայ: Գնացէք, ցոյց տվէք ձեզ: Թէ կասի ոչինչ չկայ—կհանդատանաք, կասի սիֆիլիս է—կբժշկվէք:

Կան մարդիկ, որոնք սարսափելի յուսահատութեան մէջ են ընկնում, երբ որ իմանում են, որ վատ ցաւ են ընկել. կարծում են թէ կորած են, էլ չեն լաւանայ:

Բայց այդ սխալ է:

Միճիլիսը բուժելի հիւանդութիւն է: Լաւ բժշկվեցէք ու էլի նորից առողջ մարդ կդառնաք:

Միայն մի բան. պիտի անպատճառ բժիշկը ձեզ բժշկի և ո՛չ թէ զահագան

մօլլաներ, հեփիմներ ու պառաւներ: Միայն բժիշկն է հասկանում, թէ ինչ է սիֆիլիսը, միայն նա է հասկանում կանոնաւոր բժըշկութիւնը:

Վաս ցար ոչ ոք, բացի իսկական բժեկից, չի կարող բժեկել:

Ինչի՞:

Ամենքը տեսած են մեծ մեքենաներ, որոնց մէջ հարիւր տեսակ երկաթներ, օղեր, անիւներ, վինտեր, մեխեր կան: Ասենք, թէ այդ մեքենան փչացել է, էլ չի բանում, ու կանչում են մի մարդու, որը իսկի հասկացողութիւն չունի դրա մասին: Կարճ է նա իմանալ, թէ ինչպէս պէտք է դրստել, որ վինտն է փչացած, որ անիւն է կոտրած: Ի հարկէ, ոչ: Ամեն մարդ հօ չի կարող ժամացոյց ուղղել: Մարդուս մարմինն էլ մի շատ բարդ մեքենայ է: Բժիշկները 6—7 տարի քննում—ղննում են այդ մեքենան, հարիւրաւոր դրքեր են կարդում դրա մասին ու հազիւ են հասկանում: Ի՞նչ կարող են հասկանալ պառաւ կանայք, որոնք իսկի կարդալ էլ չգիտեն:

Ասենք, նրանք իրանց պապերից լսել են, թէ սիֆիլիսի դեղը սնդիկն է: Բայց թէ ինչ ձեւի պիտի լինի սնդիկը, ինչ ժամա-

նակ պիտի տալ նրան, ինչ չափով, քանի ժամանակ, երբ պէտք է դադարեցնել և այլն: Այդ բաները նրանք չգիտեն ու իրանց դեղերով աւելի վնասում են հիւանդին, քան օգուտ հասցնում:

Նրանք առհասարակ ամենքին մուխ են օտարի և այդ ձևով այնքան սնդիկ են մտցնում հիւանդի մարմնի մէջ, որ խեղճի ընդերը ուռչում են, բերնի մէջ խոցեր ու վերքեր են դուրս գալիս, թուրը ծորում է բերնից, հիւանդը սաստիկ լուծ է ընկնում և ուժասպառ է լինում: Նա տեսնում է, որ դրուժիւնը վատացել է ու այն ժամանակ միայն դիմում է իսկական բժշկի, բայց արդէն ուշ է լինում և դժուար է լինում օգնել խեղճին:

Այդ դեռ ոչինչ:

Լինում են և այնպիսի դէպքեր, որ պառաւների դեղերից մարդիկ թունաւորվում են ու սարսափելի ցանջանքների մէջ մեռնում:

Առաջվայ ժամանակները դեռ բժիշկներ չկային, և ժողովուրդը իր յոյսը մօլլաների ու պառաւների վրա էր դրած: Բայց հիմի տէրուժիւնը համարե՛ս ամեն տեղ բժիշկներ է նշանակել, հիւանդանոցներ

հիմնել: Եթէ դիւղումը բժշկչկ չկայ, դժուար բան չէ մօտիկ քաղաք գնալ, բժշկին տեսնել: Այժմ ամեն աղքատ կարող է ձրի բժշկվել, նոյն իսկ ձրի դեղեր ստանալ: Թո՛ղ ուրեմն ամեն հիւանդ բժշկի դիմի, — բժիշկը խղճով կվերաբերվի դէպի աղքատը, կխնամի, կառողջացնի նրան ու չի թողնի, որ կորչի և իր հետ ընտանիքն էլ կորցնի:

Բժշկվելու համար, ի հարկէ, ամենից լաւն այն է, որ հիւանդը հիւանդանոցում պառկի: Բայց ամեն տեղ հիւանդանոց չըկայ, յետոյ սիֆիլիսը այնպիսի հիւանդու-թիւն է, որ սոսի վրա էլ կարող է բժշկվել, միայն հարկաւոր է, որ հիւանդը ճշտու-թեամբ կատարի բժշկի հրամանները:

Ով որ ուզում է բժշկվել վատ ցաւից, նա պիտի մրսելուց պահպանի իրան: Եթէ բերանի կամ բզի մէջ խոցեր կան, նա չպէտք է խմի ու ուտի ո՛չ շատ սառ, ո՛չ շատ տաք բան, պէտք է ծխելն էլ թողնի:

Նա պիտի մաքուր պահի իրան. վրայի խոցերն ու ջրջրուկները պիտի լուանայ դ՛ու ջրով օրական գոնէ երեք անգամ և վրան բժշկի տուած փոշիները ցանի: Այն շորերն ու կապոցները, որոնցով կապում են սիֆի-

լիտի խոցերը, պէտք է շուտ-շուտ լուանալ: Առհասարակ քանի մաքուր պահվեն այս խոցերը և ջրջրուկները, այնքան շուտ կլա-
ւանան:

Հիւանդը չպէտք է խմիչքներ, արող-
գինի խմի, որովհետև արբեցողներին սի-
ֆիլիսը աւելի է փաստում և խմողը աւելի
դժուարութեամբ է առողջանում:

Նրա սնունդը (ուտելիքը) պիտի լա-
ւինի, և շատ չպէտք է յոգնեցնի իրան աշ-
խատանքով, այլ ընդհակառակը պիտի աշ-
խատի կազդուրվելու, որ կարողանայ հի-
ւանդութեանը յաղթել:

Չի կարելի բժշկութիւնը թողնել, բանի
որ բժիշկը չի ասի, թէ բաւական է:

Պէտք է գիտենաք, որ այդ հիւան-
դութիւնը մի երկու շաբաթուայ մէջ չի
վերջանայ: Երբեմն 3 ամսից յետոյ էլ նորից
մի բան է դուրս գալիս:

Ուրեմն սիֆիլիս ունեցողը երկար ժա-
մանակ պիտի բժեկվի:

Առհասարակ հիւանդը այն ժամանակ
միայն կարող է իրան առողջ համարել, երբ որ
երկու-երեք ամի էլ ոչ մի նշան չի երեւացել
վրան: Թէ չէ շատերը հիւանդանում են

մի բանի անդամ, բժշկի մօտ են դնում ու, հէնց որ վրաների վէրքերն ու խոցերը լաւանում են, էլ երկար չեն մտածում—սպակվում են:

Եւ դիտէք ինչ է պատահում:

Այն, որ մի երկու ամիս հազիւ անցած, յանկարծ կնոջ վրա սկսում են երեւալ վատ ցաւի նշանները: Այդ նշանակում է, որ մարդը լաւ չէր առողջացած, նրա մէջ դեռ մնացած էր սիֆիլիսի թոյնը: Ո՛րչափ անտանելի կդառնայ այն ժամանակ այդ խեղճ մարդու դրուժիւնը: Ի՞նչ կասեն նրա կինն ու ազգականները: Ի՞նչպէս կզըզջայ նա, որ պսակվելուց առաջ բժշկից խորհուրդ չէր հարցրել:

Հիմի էլ դեռ այնպիսի տխմար մարդիկ կան, որոնք բժշկվում են զանազան հէքիմների ու պառաւների մօտ և յոյս ունեն, թէ կլաւանան: Մինչև անգամ կարծում են, թէ դրանք բժշկներից աւելի շուտ կլաւացնեն: Ասում են. «այ, հրէն, այս ինչին պառաւը մոլի տվեց, իսկոյն առողջացաւ, էլ ոչինչ չի երեւում վրան»: Բայց այս ասողն էլ չի իմանում, որ այդպէս շուտ լաւացողը իսկի սիֆիլիս չի ունեցել, այլ ուրիշ թեթեւ բան, այնպիսի բան, որը ինքն իրան էլ կլաւա-

նար: Պառաւը կամ չէ հասկացել, կամ թէ
չէ խաբել է:

Է

ԵՐԲ ՍԻՃԵԼԻՒՍՈՏԸ ԿՍՐՈՂ Է ԱՄՈՒՍՆԱՆԱԼ

Սա մի շատ կարևոր խնդիր է:

Ամենից առաջ, վատ ցաւ ունեցողը
չպէտք է պսակվի առանց բժշկի խորհրդի,
որովհետև միայն բժիշկը կարող է իմանալ,
թէ նա բոլորովին առողջացած է, թէ ոչ:

Հիմի տեսնենք, թէ ինչ է պատահում
երբ որ վատ ցաւի տէրը չառողջացած կին
է ուզում:

Ամենից առաջ ի հարկէ վարակվում է
կինը ու հիւանդանում ու երկար տարիներ
կրում է այն տանջանքները, ինչ որ կրել էր
ինքը հիւանդը: Խեղճ կինը կորցնում է իր
թարմութիւնը, ջահէլութիւնը ու գեղեցի-
կութիւնը, նիհարում է, քիթը պծում ու
դէմքը այլանդակվում:

Բայց այս բոլորը չէ:

Նա չբեր է մնում, կամ անցուցմեր
է անում (վիժում է), կամ մեռած երեխա-
ներ ծնում: Իսկ եթէ երեխան կենդանի էլ

է ծնվում, հիւանդոս է լինում ու շուտով մեռնում է:

Պատահում է, որ երեխան ծնվելիս բուրբուրկն առողջ է երևում, բայց հասնելով 12—13 տարեկան հասակի, սկսում է տկարանալ: Մարմնի վրա դուրս են տալիս խոցեր, ոսկորները ուռչում են ու փտում, բիթը բլում է, և այս խեղճերը հազիւ 17—18 տարեկան դառած, այնպէս են այլանդակվում, որ մարդ սարսափում է վրաները նայելիս: Աղջիկն այս հասակում պիտի մարդու դնար, բայց այդպիսին ո՞վ կառնի:

Կամ թէ չէ երեխան ընկնաւոր է դառնում, կուրանում է, կամ ապուշ ու կիսախել է մեծանում և ոչ մի բանի պէտք չի լինում:

Ահա թէ ինչ սարսափելի ախտ է սիֆիլիսը: Իզուր չէ, որ նրան ՎԱՏ ՅԱԻ անունն են տվել:


Շատ տանջանքներ է հասցնում նա հիւանդին, և շատ ընտանիքներ անբաղդացնում:

Սիֆիլիսով հիւանդանալը ոչ ամօթ է և ոչ յանցանք, բայց ամօթ ու յանցանք է չբժշկվել ու իրան կորցնել: Աւելի ևս մեծ յանցանք է պսակվել ու անբաղդացնել

անմեղ աղջկան ու նրանից ծնած երեխաներին:

Թող կանոնաւոր կերպով ու երկար ժամանակ բժշկվի վատ ցաւ ստացողը և նա կառողջանայ ու կարող կլինի ամուսնանալ ու առողջ ընտանիք ունենալ:





Հեղինակի միւս հրատարակութիւնները.

- 1) Փանտախտ (մի քանի օրինակ միայն) 20 կ.,
- 2) Խօղերայի մասին (սպառւած), 3) Խօղերա 5 կ.,
- 4) Հիպնոտիսմ հատ. I. (մի քանի օրինակ միայն) 25 կ., 5) Հիպնոտիսմ հատ. II. 15 կ., 6) Գպրոցական առողջապահութիւն (պատկերազարդ) 50 կ.,
- 7) Առողջ երեխաների խնամատարութիւն 25 կ.,
- 8) Սիֆիլիս, կակուղ շանկր, Սուսունակ 25 կ.,
- 9) Թշուառների բարեկամ բժիշկ Հաազ 20 կ.:

ԲՃՇԿԻ ԶՐՈՅՅՆԵՐ. № 1 ՄԻ ԽՄԻՐ 5 կ.:

Շուտով լոյս կ'եսնեն «Բժշկի գրոյցների» հետևեալ գրոյկները.

«Բարակացաւ», «Մի ծիւր», «Մանուկների վարակիչ հիւանդութիւններ»:

«Բժշկի գրոյցները» ծախվում են Թիֆլիսի Եւգաւսական գրավաճառանոցներում կամ հեղինակի մօտ: Պարսկասանցիի դիմելու են. Թ ա լ Ր ի գ, դ օ կ ս օ Ր Փ ա շ ա յ Ե ա ն ի ն:

Հեղինակի հասցէն. Тифлисъ, Д-ру В. М. Арцруни.

Այս ամառ մինչև Սեպտեմբեր պահանջներն ուղղել Լевону Меликъ-Адамянъ. Редакція «Мурчъ».